



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
 E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՎԱՍՏԱՆԻ ՄՕՏ ՄԱԿԻ
 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՔՈՆՍՈՒԵԼՕ ՎԻՏԱԼԸ**

Հայաստանի մօտ ՄԱԿի ներկայացուցիչ Եւ միջազգային կազմակերպութեան աշխատանքները համակարգող գլխավոր պատասխանատու Տիկին Քոնսուելօ Վիտալ Չորեքշաբթի, 30 Յուլիսի առաւօտուն այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան Եւ դիմաւորուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Դեսպան Վիտալի կ'ընկերանային Հայաստանի նախկին գլխավոր հիւպատոս Տիար Արմէն Բայբուրթեան, որ ներկայիս ՄԱԿի մէջ կը վարէ Հայաստանի հարցերու երեց խորհրդականի պաշտօնը, Հայաստանի մասին ծրագիրներու բաժանմունքի վարիչ Տիկին Նարինէ Սահակեան: Հանդիպումին ներկայ եղաւ Ազգ. Առաջնորդարանի քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան:

ՄԱԿի ներկայացուցիչը՝ Տիկին Վիտալ շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան համար, ապա, ընդհանուր գիծերու մէջ խօսեցաւ այն ծրագիրներուն մասին, զորս ՄԱԿը կը պատրաստէ Հայաստանի տնտեսական, կրթա-մշակութային, կենսոլորտի, առողջապահական Եւ այլ մարզերու աշխուժացման համար: Ան յայտնեց, որ Հայաստանի մէջ ՄԱԿի աշխատանքները սկսած են 1993ին, Եւ նշեց, որ ինք այցելութիւններ կու տայ հայկական սփիւռքի տարբեր օճախները, եղած է նաեւ Լիբանան ու այցելած՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանը, նկատի ունենալով, որ արտերկրի հայութիւնը սերտ կապեր ունի Հայաստանի հետ Եւ ունի կարողականութիւններ՝ որոնք կրնան ի սպաս դրուիլ Մայր Հայրենիքին: ՄԱԿի այս բաժանմունքը կապեր կը հաստատէ նաեւ այլ ժողովուրդներու սփիւռքներուն հետ, օգտուելու համար անոնց փորձառութենէն:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց ՄԱԿի պաշտօնատարներուն այս աշխատանքները Եւ հաստատեց, որ Արեւմտեան մեր շրջանի հայութիւնը միշտ ալ պատրաստակամ եղած է գործակցելու Հայաստանի բարգաւաճման ծառայող ծրագիրներու իրականացման համար:

Տիար Ա. Պայպուրթեան, իր կարգին, գոհունակութիւն արտայայտեց Ազգային Առաջնորդարանի նոր շէնքին իրականացման համար, մաղթելով որ Առաջնորդարանի աշխատանքի դաշտերը նոր տարածում գտնեն ու ծառայական կեանքը արձանագրէ նոր նուաճումներ:

Հրաժեշտի պահուն, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:
Հիւր ներկայացուցիչները նաեւ ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի շէնքի
տարբեր բաժանմունքներուն ու Ս. Տրդատ եւ Ս. Աշիսէն մատրան:

PRELATE WELCOMES UNITED NATIONS RESIDENT COORDINATOR CONSUELO VIDAL TO THE PRELACY

On the morning of Wednesday, July 30th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy United Nations Resident Coordinator and UN Development Programme (UNDP) Resident Representative Mrs. Consuelo Vidal. Mrs. Vidal was accompanied by former Consul General of Armenia in Los Angeles Mr. Armen Bayburtian, who is currently a senior advisor on Armenian issues in the United Nations, and UNDP director Mrs. Narine Sahakyan. Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian was also in attendance.

Mrs. Vidal reported to the Prelate on the UN development programs in Armenia aimed at improving finance, education, environment, health, and various other sectors. She also reported that the United Nations began operating in Armenia in 1993 and that she herself has visited many communities in the Diaspora, including Lebanon and specifically the Catholicosate of Cilicia, given that Armenians living in these communities have close ties to the homeland and have the means to offers assistance to Armenia. She noted that the specific department of the United Nations of which she is a part of visits with non-Armenian Diaspora communities as well to learn of their experiences.

The Prelate highly commended the efforts of the guests and reaffirmed that our community is always ready to contribute to the progress of Armenia.

Mr. Bayburtian congratulated the Prelate on the achievements of the Prelacy such as the successful realization of the headquarters, and conveyed his well wishes for success in future endeavors.

The meeting concluded with an exchange of mementos, following which the guests were given a tour of the headquarters to become familiarized with the various departments.